891.99-199
Հ-68

ՀԱՋԱՐ ՈՒՄԻԽԱՂ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՅԻՍՆԵԱԿ

«ԵՐԿՐԱՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ»

Ա 6299
74856

Խմբագրեցին

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ և ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆ

Վաղարշապատ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի.
1904

Дозволено цензурою 24 Марта 1904 г.
г. Тифлисъ.

ՀԱՋԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՂ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՅԻՄՆԵԱԿ

I.

Հոմ արէք, սարեր ջան, հոմ արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։

Ամպեր, ամպեր, մի քիչ զով արէք,
Վարար անձրև թափէք, ծով արէք,
Գէջ մարդու օր-արևը
Սև հողի տակով արէք։

Հոմ արէք, ամպեր ջան, հոմ արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Ամպերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։

Սարեր, ձորեր, դաշտեր ու ջրեր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրներ,
Մի վեր կացէք, իմացէք,
Տեսէք իմ սրտի ցաւերը։

Հով արէք, սարեր ջան, հով արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում։

2.

Սիրտըս նրման է էնփլված տներ,—
Կտրեր գերանները, խախտեր է սրներ.
Բուն պիտի դընեն մէջ վայրի հաւքեր.
Երթամ՝ ձի թալեմ էն գարնան դեռեր.
Ընիմ ձլկներու ձագերացքն կեր։
Ա՛յ, so յա՛ճ տրնաւեր։

Սև ծով մ՚եմ տեսե, սիպտակին էր
բոլոր.
Ալին կը գարնէր, չէր խառնի յիրար.
Էն ո՞րն է տեսե մէկ ծովն երկթաւոր,—
Անառնի սիրան է պըզտոր ու մոլոր։
Ա՜խ, իսկի մի՛ընիք սրտիկ սևաւոր։
Ա՛յ, so յա՛ճ տրնաւեր:

3.

Էս օր ուրբաթէ պաս է.
Դէ՛, հէ՛, զը՛նգը, զը՛նգը, դէ՛, հէ՛ ջա՛ն.
Սըրտիկ արծաթէ թաս է։
Դէ՛, հէ՛, զը՛նգը, զը՛նգը, դէ՛, հէ՛, ջա՛ն.
Սըրտիկ, մալուլ մի մընա,—
Աշխարհ մարդու չի մընա։

Աշունն եկաւ ցօղալէն,
Ծառի թըփեր դողալէն։
Սըրտիկ, մալուլ մի մընա,—
Աշխարհ մարդու չի մընա։

Կըռունկ կանչեց սարերուն,
Ղարիբ տըղէն երերուն։
Սըրտիկ, մալուլ մի մնա,—
Աշխարհ մարդու չի մընա։

Ելել եմ ու ճար չունիմ,
Մեռնելու հընար չունիմ։
Սըրտիկ, մալուլ մի մընա,—
Աշխարհ մարդու չի մընա։

4.

Լուսնակն անուշ, հովն անուշ,
Վա՛յ, լե՛, լե՛, լե՛, լե՛,
Վա՛, լո՛, լո՛, լո՛, լո՛.
Երնականի քունն անուշ։
Երցեկ էն orbr,
Որ կելցեցեք սարեր։

Մազից լուսնակ երկընուց.
Հովքի փոշն էր անուշ։

Հասարն ելներ կարաժայ,
Մանկալ պառկեր՝ քունն անուշ։

Զրզզալն քամին կը փչէ,
Մոմային հովն էր անուշ։

Դաշտեր, ձորեր ժընջեր են,
Զբրեր գլգլան՝ ձէնն անուշ։

Հաւքեր թառան իրենց քուն,
Բլբուլի տաղն էր անուշ։

Անմահական հոտ բուրէր,
Քաֆուր վարդի հոտն անուշ։

5.

Զինգ տու, քաշի, ա՛յ եզը,
Ա՛ռա, հո՛, հո՛, ա՛ռա, հո՛.
Լուծըդ մաշի, ա՛յ եզը.
Ա՛ռա, հո՛, հո՛, ա՛ռա, հո՛:
Աստուած պահէ քու տէրը,
Ա՛ռա, հո՛, հո՛, ա՛ռա, հո՛:
Մինն էլ տաշի, ա՛յ եզը։
Ա՛ռա, հո՛, հո՛, ա՛ռա, հո՛:

Մեր գութանը օգած ա,
Եզանց ուսը նոթած ա.
Վարէ վարը, ա՛յ գութան,
Հազիւ խոտը զօգած ա։

Շողքըն ընկաւ ծըմակին,
Աստուած կը տայ մըշակին.
Սուր գութանը ծիր գընաց,
Տէր-մըշակը քամակին։

Սերմէ, սերմէ, ա՛յ մըշակ,
Սուրբ ա, սուրբ ա քու փեշակ.
Մինը հազար տուր, Ա՛ստուած,
Քեզ ձէն կը տան տէր-մըշակ։

6.

Գուբիանը հայ եմ բերում,
Բերանը բաց եմ բերում.
Տես, քեզ ոլորան եմ սիրում,—
Զուկը տապկած եմ բերում։

Էս օր գուբիանը մերն ա,
Մաճ բըռնողը իմ հէրն ա.
Եզնարած շէկլիկ տըղէն՝
Աշխարհ գիտէ՝ իմ տէրն ա։

Վէր կացած հաւախօսին՝
Գուբիանն ա վարում փոսին.
Բարկ արէք երկընքում՝
Ճողն ա դիպել ակօսին։

Հանքեր, թեանի արէք,
Եարիս հոգանի արէք.
Թող բարակ քամին փըչի,
Հեռն էլ գուք նանի արէք։

7.

Արաղը հեշտացել ա,
Եա՛ր.
Ճամբէքը կոշտացել ա,
Եա՛ր.
Թաքմր տարէք իմ եարին,
Եա՛ր.
Առնողքս շատացել ա
Եա՛ր:

Իմ սէրը սուր ա դառել,
Կըրակ ու ջուր ա դառել.
Եա՛ր, քեզ սըրտով սիրելը
Ինձ թուք ու մուր ա դառել.

Էլի դալն եմ իմացել,
Աչքըս ճամբիդ մընացել.
Քեզ համար դիշեր, ցերեկ
Միտք անելով եմ կացել.

Բախտը զարկեց սըրտիս ներս,
Արտասուքըս եղաւ գետ.
Թէ Աստուածըդ կը սիրես,
Եա՛ր, ինձ արի, տար քեզ հետ.

8.

Զինար ես, կեռանիլ մի,
Եա՛ր, եա՛ր.
Մեր գրանէն հեռանալ մի,
Եա՛ր, եար.
Եա՛ր, Եա, Եա՛յ, Եայ, Եա՛յ, Եա՛յ,
Եա, Եա՛յ, Եայ, Եա՛յ, Եա՛յ.
Եաթ, քո Աստուած կը սիրես,
Եա՛ր, եա՛ր.
Հեռու ես, մոռանալ մի՝
Եա՛ր, եա՛ր,
Եա՛ր, Եա, Եա՛յ, Եայ, Եա՛յ, Եա՛յ,
Եա, Եա՛յ, Եայ, Եա՛յ, Եա՛յ։

Քեր բաղի գու

բաց ա,
Ոտներդս շաղով թաց ա.
Ինձանից հեռացել ես,
Աչքերդս լիքը լաց ա։

Էս գիշեր երազ տեսայ,
Հերկերդս վարած տեսայ.
Ամօթ քեզի, ով տըղայ,
Քո եարը տարած տեսայ։

9.

Կուժն առայ, ելայ սարը,
Զըգըտայ ֆիդան եարը.
Ֆիդան եարը ինձ տըուէք,
Զըքաշեմ ան ու զարը։

Մեծ սարի հովին մեռնեմ.
Շէկ տըղի բոյին մեռնեմ.
Մի տարի ա չեմ տեսել,—
Տեսնողի աչքին մեռնեմ։

Բըլբուլը դարի վերայ,
Խընձորը ծառի վերայ.
Սիրած սիրածի տային,
Զար գեռնին՝ քարի վերայ։

10.

Երկինքըն ամպել է,
Ի՞նչ անուշ թոն է.
Գամ՝ դըռնէն անցնեմ՝
Հոգեակըս հոն է։

Երկինքը ամպել է,
Գետինը թաց է.
Եարը քընել է,
Երեսը բաց է։

Երկինքը ամպել է,
Ի՞նչ անուշ երակ.
Աքրտիս մէջ լըցաւ
Մի բուռը կըրակ։

Երկինքը ամպել է,
Գետին շաղերով.
Ես քեզ սիրել եմ
Անուշ խաղերով։

Երկինքը ամպել է,
Գետինը ժուռթ է.
Ես քեզ ուզել եմ,
Թող ասեն՝ սուտ է։

Շարքը դու, շէկիկ եար,
Տեսնեմ՝ դու ումն ես.
Իրաւ եմ ասում՝
Դու իմ աքրտուումն ես։

11.

Ալագեազ սարն ամպել ա,
Վա՛յ, լե՛, լե, լե՛, լե, լե՛, լե, լե՛.
Աղբէր իր ձին թամբել ա.
Իմ մայրիկ ջան, իմ մայրիկ ջան:

Աղբէր իր ձին թամբել ա,
Եարոջ դըռնէն անցել ա:

Եարոջ դըռնէն անցել ա,
Ելե դաշտը՝ խաղցել ա:

Ելե դաշտը՝ խաղցել ա,
Անձրև եկե, թըրջել ա:

Անձրև եկե, թըրջել ա,
Արև զարկե՝ չորցել ա:

Արև զարկե՝ չորցել ա,
Քան կարմիր վարդ բացել ա:

12.

Մեր դբռանը խընկի ծառ,
Գիլո՛ւմ ջան,
Ձեր դբռանը խընկի ծառ.
Գիլո՛ւմ ջան.
Խընկենին ա բերել բար,
Գիլո՛ւմ ջան.
Իմ խոբոտիկ, պըզտիկ եար։
Գիլո՛ւմ ջան։

Մեր դբռանը խընկի ծառ,
Նախշուն բըլբուլ վըրէն թառ.
Երթար ու գար, շոտոր տար,
Միրուն եարին օրոր տար։

Մեր դբռանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրէն թառ.
Գընար ու գար, շրին տար,
Անուշ եարի թևին տար։

Մեր դբռանը խընկի ծառ,
Ոսկի բըլբուլ վըրէն թառ.
Կարմիր խընձոր անել տար,
Աբուան ծաղիկ տանել տար։

13.

Անձրևն եկաւ շաղալէն,
Ուռաւ տերև գաղալէն.
Վա՜յ, լէ, լէ, լէ՜, լէ՜, լէ,
լէ, լէ՜, լէ՜, լէ, լէ՜.
Հերէս եկաւ իմ ապրէր,
Ալ ձին տակին խաղալէն.
Վա՜յ, լէ, լէ, լէ՜, լէ՜, լէ՜,
լէ, լէ՜, լէ՜, լէ, լէ՜.

Դէմ ազօթքան խաչ անեմ,
Թըշնամու դէմ շանչ անեմ.
Զեռքս գըցեմ վըզովը,
Մի երեսը պաչ անեմ.

Խալիչէքը փըռել եմ,
Նախշուն բարձեր դըրել եմ.
Թանգան ջան, քեզ ուտելու
Մեր, կարագ հաղբրել եմ.

Տապկած հաւի ճուտ բերեմ,
Ոչխարի ժաժուն մերեմ.
Որ գիտենաս, անմուշ ջան,
Թէ քեզ սրբոով կը սիրեմ.

Հ 7293

Ղուշ մի գառնա թեւաւոր,
Դու խաղ կանչի ձեւաւոր,
Եարաք կընի էն օրը,
Որ գաս մեր տուն թռչաւոր։

14.

Պարտէզ ունիմ գրրախտ ա,
Մաղիկ ծաղկունքի վախտ ա.
Գէշ աղջիկ, սիրուն տղայ,—
Էս էլ մի ուրիշ բախտ ա։

Ոսկէ մատանիք մատներիս,
Շողքն ընկաւ երեսիս.
Աչքար շատով մի կանչի,
Անքուն կանեա իմ եարիս։

Սիրտս տրնով լցնեցիր,
Կըրակով խորովեցիր.
Աչքդ գուս գայ, ա՜յ տղար,
Ի՞նչ շատ ձէնքդ գլցնեցիր։

15.

Արև թրռվրռով եկաւ,
Իմ չինարի եարը,
Մեր բանը կրռուով եկաւ.
Գարդիմանի եարը.
Թրշնամու որդին մեռնի,
Իմ չինարի եարը,
Իրա չար սրրաով եկաւ.
Գարդիմանի եարը.
Իմ չինարի եարը,
Իմ չինարի եարը.
Իմ չինարի եարը,
Գովակեանի եարը.

Ա ՝ ձրրաղը վառայ, վառայ,
Հօր հետ վատամարդ գառայ,
Մէր ու աղբէր թող տրւի,
Ես իմ սիրածին առայ.

Գարատիի ծէրին կանչի,
Թող թրշնամին ամանչի.
Արևիդ մեռնեմ, եար ջան,
Զինարի պէս կանանչի.

16.

Կայնել ես, կանչում էլ չես,
Եա՛ր,
Բոյէդ ամանչում էլ չես,
Եա՛ր.
Եար, Եայ, Եայ, Եայ, Եայ, Եայ.
Եա՛յ, Եա՛յ, Եա՛յ, Եայ, Եայ, Եա՛յ.
Եկար կըշտու

17.

Սա՜ր, սա՜ր,
Ես սարերի ծաղիկն եմ.
Ջա՜ն, ջա՜ն,
Ես Լեռների քուրիկն եմ։

Ժամի զրոնէն դուս եկայ,
Արևի պէս լուս եկայ։

Էն սարին սար չեմ ասի,
Փիս գեղդին եար չեմ ասի։

Ինձ չէր առնում՝ թող չառնէր։
Խօսք ու զրուցն էլ ինչ էր։

Հաց եմ թըխել փըրփըռի,
Վատ խօսողը դըրքըրի։

Ես սարերի ծաղիկն եմ.
Ես Լեռների քուրիկն եմ։

18.

Մառնիքը մառովքա չէր,
Ախ.
Միրածը սըրտովքա չէր։
Ախ.
Վա՜յ, լէ, լէ, լէ՜, լէ, լէ, լէ՜,
Վայ, լէ, լէ, լէ՜, լէ։

Դերձիկ, մառներըդ կոտրի,
Մինթանէն բոյովքա չէր։

Զարդեար թևերըդ կոտրի,
Քամարը մէջքովքա չէր։

Միրածի հէրը մեռնի,
Միրածը սըրտովքա չէր։

19.

Ախ կանեմ, արուն կու գայ.
Մև սըրտիս գարշուն կու գայ.
Կորուցել եմ իմ եարը,
Ո՞վ գիտէ, էլը ուուն կու գայ։

Սրտիս գիպաւ պատմեն.
Ո՛չ ոգորմի իմ տատին.
Էս լէն արձակ աշխարհը —
Ինձի տրուաւ աղքատին։

Սարերին գարուն կու գայ.
Ու սրբոխս արուն կու գայ.
Ի՞նչ անեմ այնպէս եարը, —
Պըտըտուի տարուն կու գայ։

20.

Սարերի վերով գընաց,
Եա՛ր, եա՛ր.
Ուրոսով, արոսով,
Եարխս կարոսով.
Իմ եարը խրոսով գընաց.
Եա՛ր, եա՛ր.
Մրցացիր, մրցացիր,
Չինուոր գրցացիր։
Ոչ լոր եկաւ, ոչ կագաւ,
Եա՛ր, եա՛ր.
Ուրոսով, արոսով,
Եարխս կարոսով,

Զեռնէս թրռնելով գընաց։
Եա՜ր, եա՜ր.
Մրնացիր, մրնացիր,
Չինուոր գրնացիր։

Մաղիկ էր հառով-ծառով,
Եկաւ, անցաւ իմ ծառով.
Աչքըս տեսաւ՝ սիրեցի,
Ու մընացի կարօտով։

Շէկ եարիս գըրի ճամբան,
Ամոնս, չասի իրան բան.
Ճամբին օգնական չունի,—
Սուրբ Կարապետ պահապան։

21.

Էա գիշեր լուսը տեսայ,
Երի, երի, երի ջա՜ն.
Իմ եարը գուսը տեսայ.
Երի, մարալո՛ ջիրան.
Ելել էր ուխտ էր գալի,
Երի, երի, երի, ջա՜ն.
Հրացանը ուսը տեսայ։
Երի, մարալո՛ ջիրան։

Արև էր ամպի տակին,
Սուրբ Յակոբ ճամբի տակին
Մի էնպէս աղբէր ունեմ,
Հրեղէն ձին թամբի տակին։

Արևը սարի վերայ,
Մամուռը քարի վերայ.
Ես ոտի սարք պիտէի,
Իմ սիրած եարի վերայ։

Հէ՛ն, սարէն մարդ ա գալի,
Սարը կըրակ ա տալի.
Առաջը աղլուխ բացաւ,
Իմացայ վարդ ա տալի։

22.

Լուսնակը սարի տակին,
Եա՛ր, եա՛ր.
Եա՛ր, Ցա, Ցա՛յ, Ցայ, Ցա՛յ, Ցա՛յ,
Եա՛ր, Ցայ, Ցա՛յ, Ցայ, Ցա՛յ, Ցա՛յ.
Մամուռը քարի տակին.
Եա՛ր.
Եա՛ր, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛,
Եա՛ր, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛.

Ես իմ եարին կարօտ եմ,
Եա՛ր, եա՛ր.
Եա՛ր, Եա, Եա՛յ, Եայ, Եա՛յ, Եա՛յ,
Եա՛ր, Եա, Եա՛յ, Եայ, Եա՛յ, Եա՛յ.
Քան վարդ ու մանուշակին.
Եա՛ր.
Վա՛յ, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛,
Վա՛յ, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛։

Աչքս գըցել եմ սարին,
Ոտքս սրուել լեռ քարին.
Երթայ ու էլ ետ չը գայ,
Քեզ զինուոր գըրած սարին։

Կանգնեմ քարին ու սարին,
Գիր գըրեմ զարիք եարին.
Արցունքով գըրեմ, կանչեմ,—
Աղու կըարի՝ սէնց սարին։

23.

Սի՛ռուն ջան, սի՛ռուն ջան,
Սի՛ռուն ջան, սիրտդ մի՛ բանա.
Նրբանցած գինուտար եմ,
Ես չե՛մ դիմանայ։

Սի՛ռուն ջան, սի՛ռուն ջան,
Ծաղիկ ունիմ ալայ ա,
Ալայ չի՝ ալ-վալայ ա.
Հեռու տեղ մի եար ունիմ՝
Նրան հատիկ, լալայ ա։
Սի՛ռուն ջան, սի՛ռուն ջան, եալլն։

Էս գիշեր ես դուս ելայ,
Թամամ ձընիկ թացել ա.
Կը կամիր մարմար քարին,
Եարիս աչքն ա՝ լացել ա։

Լուսնակը բակ ա գըցել,
Գեզ ամպի տակ ա գըցել.
Իմ կուրացած բախտըն էլ
Ինձի մենակ ա գըցել։

Ամպել ա կամար կամար,
Կապել ես ոսկէ քամար.
Դու ուրիշ միտք մի անի,
Մի ջան ունիմ՝ իր համար։

24.

Լուանակն ա կայնել դարին,
Եա՛ր, ամաՀ,
Ա՛ղջի, դու սիրուՀ,
Ջա՛նէ, ջա՛Ն.
Երնակ իս տիրուՀ.
Պատկերն ա քու պատկերին.
Եա՛ր, ամաՀ,
Ա՛ղջի, իս իքլիքը,
Ջա՛նէ, ջա՛Ն.
Տարաւ իմ խելքը։
Լուանակ ջան, շուտ մի երթա,

Եա՛ր, ամաՀ,
Ա՛ղջի, դու սիրուՀ,
Ջա՛նէ, ջա՛Ն.
Երնակ իս տիրուՀ.

Զուր մէկ էլ գալոց տարին։
Եա՛ր, ամանց,
Ա՛ղջի, ֆուշֆիլքը,
Զա՛նկ, ջա՛նց.
Տարաւ իմ խելքը։

Լուսնակը ցոլաց, գընաց,
Դէմ առաւ ամպին՝ մընաց.
Սըրտով պայման չը տըւաւ,
Սըրտիս գաղ եկաւ, մընաց։

Լուսնակը պահ ա մըտել,
Անուշ եարըս չեմ գըտել.
Աչքըս արցունքով լըցուած
Գիշերը քուն եմ մըտել։

Գիշերը քուն եմ մըտել,
Քեզ երազումըս գըտել.
Քեզանից ձեռ չեմ վերցնի,
Քանի սաղ եմ, չեմ փըտել։

25.

Ա՜խ, մա՛ռալ ջան,
Կոկոնքս թառմած մընաց,
Ջա՜ն, գեա՛ռալ ջան.
Միրտքս կըրակած մընաց.
Ա՜խ, մա՛ռալ ջան,
Ինչ անեմ իմ ապրելը,
Ջա՜ն, գեա՛ռալ ջան.
Իմ աչքերը թաց մընաց։

Կամար ունքըդ գովեցիր,
Միրել էիր՝ առեցիր.
Ինձ պէս ուժով կըտրըծին
Դու անդանակ մորթեցիր։

Ջահիլ եմ, ընկեր չունիմ,
Ընկել եմ ես, տէր չունիմ,
Ոչ լաւ ասէր, ոչ էլ վատ,—
Հարբատուխեան տէր չունիմ։

26.

Եա՛ր.

Ա՛յ, հեւա՛, հեւա՛, սիրտքս,
Վա՛յ, եա՛ր, լի՛.
Ճընճղկան թեւ ա սիրտքս.
Եա՛ր.
Քան պուտը կարմիր չը կայ,—
Վա՛յ, եա՛ր, լի՛.
Բաց անեմ՝ սեւ ա սիրտքս։

Պարտէզ եմ՝ շատար չունիմ,
Ի՛սկ կըարիճ եմ՝ եար չունիմ.
Գընաց ձեռնէս իմ կեանքը,—
Զահիլ եմ՝ խաբար չունիմ։

Ուռի ծառին բար չի՛ընի,
Տակը քար ա, վար չի՛ընի.
Էն Աստուածն ու երկինքը
Սիրատէրին ճար չի՛ընի։

27.

Հո՛յ եար, հո՛յ եար,
Ա՛զիզ եար ջան դուռը բաց.
Հո՛յ եար, հո՛յ եար,
Ոտներս, ոտներս ցրտուն զրնաց։

Հո՛յ եար, հո՛յ եար,
Պաղ ես ձրմեռուայ սառից,
Ամուր ես դու լեռ քարից.
Եռևէդ ինձ քաշ տալով
Տարար գլցեցիր սարից։
Հո՛յ եար, հո՛յ եար, եալլն։

Զիւն ա գալի վերևից,
Ջուր ա կաթում տերևից.
Իմ պարզ օրքս ամպել ա
Անբախտ եարի երեսից։

Ճերմակեց գեղին ձրնից.
Ա՛ղջի, դուրս արի տընից.
Զեռովքդ էրուած սրտես
Կամ դեղ արա, կամ ջուր վից։

28.

Էս գիշեր, լուսնակ գիշեր,
Վա՜յ, լէ, լէ, լէ՛, լէ՛, լէ,
լէ, լէ՛, լէ՛, լէ, լէ՛.
Զիւնն եկեր, գետին նախշեր,
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռացայ.
Ով մոռացայ՝ երկու աչքով կուրացայ.
Աչքերդ գէմ՝ արա՝ պաչեմ,
Վա՜յ, լէ, լէ, լէ՛, լէ՛, լէ,
լէ, լէ՛, լէ՛, լէ, լէ՛.
Կեռ ունքեր, կարմիր թերշեր։
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռացայ.
Ով մոռացայ՝ երկու աչքով կուրացայ։

Ա՜յ գիշեր, գարձիր տարի,
Հացը թող լինի գարի.
Մենակ եարը ինձ համար
Սրրտով խօսքը կատարի։

Ա՛ղջի, քու չարը տանեմ,
Քու սիրուդ ինձ կը սպանեմ.
Դու իմ խօսքին ականջ դիր,
Ես մօրդ հաւան կանեմ։

29.

Կայնել ես մարդի հոմին,
Վաղդի հոմին, հոմին.
Քանին տայ կըրծքիդ մոմին,
Կրծքիդ մոմին, կրծքիդ մոմին.
Երեսիդ շողին մեռնեմ,
Շողին մեռնեմ, մեռնեմ.
Աչքերիդ կապուտ ծովին,
Կապուտ ծովին, կապուտ ծովին:

Իրար հետ ծաղիկ քաղնեք,
Ծաղիկ քաղեմ, քաղեմ.
Թշնամու սիրտը գաղնեք,
Սիրտ գաղեմ, սիրտ գաղեմ.
Մէկ մէկու խօսքէ չելնենք,
Խօսքէ չելնեմ, չելնեմ.
Աշխարհքում քանի սաղ ենք,
Քանի սաղ եմ, քանի սաղ ե՞ք:

30.

Առնեմ, երթամ եմ սարը,
Առնեմ, երթամ եմ սարը,
Առնեմ, երթամ եմ սարը,
Սեր սնեցող իմ եարը:

Վրան եմ գարկել գարին,
Գայման եմ գրել տարին.
Տարին ֆեզ գալ, լրրանալ,
Հետը բերէ իր բարին
Առնեմ երթամ եալլն:

Հենց որ ծագէի արևը,
Բեզի գրրկեմ բարևը,
Իմանամ գալ իմ եարն ես,
Առնեմ, երթեմ վերևը

Քարի տակին պաղ աղբիւր,
Արծաթի ֆաս, ոսկի ջուր.
Ես կը վառիմ քո սիրուն,
Մի ֆաս ուզեմ, երկուս տուր

31.

Հո՜յ, Նա՛զան իմ Նա՛զան իմ,
Ջա՜ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ.
Նա՛զան, դու բարով եկար,
Կանգաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար.
Նա՛զան, դու բարով եկար,
Կանգաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար։

Գարնան սիրուն ծաղիկ ես,
Հո՜յ, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,
Ինձ համար աղունիկ ես.
Ջա՜ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ.
Գլխիս վերով պքոխա սուր,
Հո՜յ, Նա՛զան իմ, Նա՛զան իմ.
Նախշուն-ֆեն ֆիֆեռնիկ ես.
Ջա՜ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ։
Եա՛ր ջան, դու բարով եկար,
Կանգաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար.
Եա՛ր ջան, դու բարով եկար,
Կանգաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար։

Ճամբայ տրէք՝ առաջ գամ,
Սիրած եարիս բարև տամ.
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Քոզ տեսնի աշխարհ ալամ։

Սարեր, ձորեր, յետ կացէք,
Իմ եարի ճամբէն բացէք.
Եար եարի հետ խօսելիս
Ականջ արէք, խմացէք։

Ելշի ծառին նուշ կըլնի,
Վարդի հոտն անուշ կըլնի,
Երանելի էն աղջիկան՝
Սիրած եարին խուշ կըլնի։

32.

Գարուն ա, ձուն ա արել,
Վա՜յ, լե, լե, վա՜յ, լե, լե,
Վա՜յ, լե, լե, լե, լե՜.
Իմ եարն ինձնից ա սառել.
Ա՜խ, չորցա՜յ, վա՜խ, ա՜յ եար,
Չար մարդու լեզուցն։

Քամին փրչում՝ ա պաղ պաղ,
Լերդ ու թռչա անում՝ ա դաղ.

Եա՛ր, ինձ քէմուրատ արիր,—
Մէրդդ ինձնէ զատ արիր։

33.

Ես սարէն կու գայի,
Դուն դուռդ բացիր.
Ձեռքդ ծոցդդ տարար,
Ա՜խ արիր, լացիր։
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վառուում եմ,
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, ճալուում եմ,
Հալուում, վառուում եմ։

Ես մի պինդ պաղ էի,
Դու մրմնում լացիր.
Քո հրեղէն արցունքով
Ինձի հալեցիր։

Ես մի չոր ծառ էի,
Դու գարնան արև.
Քո սիրով ծաղկեցաւ
Իմ ճիւղն ու տերև։

Ա։ Թէ ինձ չէիր առնիր,
Ինչու սիրեցիր.
Մի քուռ կրակ եղար,
Սիրտս էրեցիր։

34.

Հո՛, եա՛մանն ու եա՛ր ջանն,
Ձի՛, եա՛մանն ու մարջանն։
Էս օր նորը նորել է,
Հո՛, եա՛մանն ու եա՛ր ջանն,
Նորել է՝ բոլորել է.
Ձի՛, եա՛մանն ու մարջանն.
Ճար, քո լուսնակ երեսից
Հո՛, եա՛մանն ու եա՛ր ջանն,
Իմ սիրտը մոլորել է։
Ձի՛, եա՛մանն ու մարջանն։

Քանի լուսին ամպի տակում
Դու ջուր կերթաս դրակում.
Հոգիս քեզ մատաղ լինի,
Սիրտըս կէրես կըրակում։

Ջուրն իմ տան տակից բըխար,
Էրուած սիրտըս լուանար.
Ճար, քո տըւած խոցերը
Քո ձեռներով լուանար։

35.

Կապուտ քուռակ հեծել եմ,
Արագին մտեցել եմ.
Ա՛խ, ջա՛ն Արազ,
Վա՛խ, երմա՛ն Արազ.
Արագ, ինձ մի ճամբայ տուր,—
Իմ եարին կարոտցել եմ.
Մի ճամբայ տուր,
Երթամ եարիս հիւր:

Արագը չունի գեամին,
Կըրծքիս ա տալի քամին.
Ես մի զարիք ջան ունիմ,
Զըհանեմ Ոսկէծամին.

Արա՜գ, Արա՜գ, Խան Արագ,
Բինգեօլից բըխան Արագ.
Ընկել եմ ես քու ծոցը,
Մի տար ման ի ման, Ա՛րագ.

Խոր գետը ծով դառել ա,
Ինձ էլ հետը տարել ա.
Խեղճ աղջիկն այնպէս գիտէ,
Ոէրա իրենից սառել ա.

Ա՜խ, Արագն է շատ վարար,
Դուրս եկնելու չունիմ ճար.
Եաթ, ոսկի ծամիդ բաց թող,
Քաշէ ինձի, քեզ ծառ տար։

36.

Զա՜ն, ա՛ղբէր, զա՜ն, ա՛ղբէր,
Զա՜ն, եա՛ր, զա՜ն,
Զա՜ն, եա՛ր, զա՜ն, եա՛ր,
Զա՜ն, ա՛ղբէր, զա՜ն։

Սարերը ման եմ եկել,
Դաշտերը բան եմ եկել.
Ասին՝ աղբէրդ եկել ա,
Դիմի նըման եմ եկել։
Զա՜ն, ա՛ղբէր, եարը։

Գարունը նոր ա բացուել,
Վարդը կոկում ա դարձել.
Ազաչանքըս չ'իր լսում,
Իմ սիրտը ման ա դարձել։

Ճըլինքըս ծուռն 'իր թողել,
Օտարի դուռն 'իր թողել.
Ինձ էնպէս 'իր ծուռացել,
Սարի էն կուռն 'իր թողել։

37.

Գացի արտեր, բրռնի լոր,
Աղջիկ տեսայ եայլի ձոր,
Նըման էր կարմիր խընձոր։
Լո՛ռիկ, գարնան քարեր
Դու վարդ արիր, լո՛ռիկ։
Նըման էր կարմիր խընձոր.
Լո՛ռիկ, լո՛ռիկ, լո՛ռիկ, լո՛ռիկ,
Լո՛ռիկ, գարնան քարեր
Դու վարդ արիր, լո՛ռիկ։

Արև դիպաս սարերուն,
Կաքաս թռաս քարերուն,
Լորիկ կայնե վեր գարուն։

Ջուր կուգայ գոչգոչալէն,
Գըլխուդ ես գըցե վալէն,
Լոր, չես հարցնե իմ հալէն։

Քար մի թալի մեր գըշին,
Թող գայ նըստի քու թըշին,
Կըրակ ասա գարիր փըշին։

38.

Հաւա՜ր Զուլո, մադա՜ր Զուլո,
Քեզի տեսայ, վառայ, Զո՛ւլո,
Բացուի՛ր, բացուի՛ր, բացուի՛ր,
Բացուի՛ր, իմ վարդ Զուլո:

Ես Ալէքն եմ՝ Մասամբեցի,
Միրուն, արի, մեր տուն կեցի,
Դէմ աղօթքան եկեղեցի։
Հաւա՜ր Զուլո, մադա՜ր Զուլո,
Բացուի՛ր, բացուի՛ր, բացուի՛ր,
Բացուի՛ր, իմ վարդ Զուլո:

Արևն ե�կամար կամար,
Զուլօն կապեց ոսկէ քամար,
Ես կը մեռնիմ՝ քեզի համար։

Արևն ընկաւ ամուր քերդին,
Քո սէրն ընկաւ մէջ իմ՝ լերդին,
Ես քեզ սիրեմ, թող դիս քերթին։

Դու դաշտ կուգաս հուլա հուլա,
Դու ներմանիս բամբկի քուլա,
Աչքիս տեսաւ, սիրտս կուլայ։

Մեր Ջուխտ գութան գաշտ կու բանի,
Զուլօ խաթուն հաց կու տանի,
Աչքով, ունքով մարդ կու սպանի։

Հելէ-վելէ, մըսրու գոմէշ,
Իմ ձեռ թալեմ Քեալաշու փէշ,
Զուլօն եղնի ինձի փեշքէշ։

39.

Ամալել ա, ձուն չի գալի,
Շողե՛ր ջան,
Սարիցը տուն չի գալի.
Շողե՛ր ջան.
Դու ըռռռա՛, դուն ուռռա՛,
Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կեռեռայ,
Շողե՛ր ջան.
Սիրտը կըրակով լցուած,
Շողե՛ր ջան,
Աչքերիս քուն չի գալի։
Շողե՛ր ջան.

Դու հարուրա՛, դուն օրորա՛,
Շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կերեւայ,
Շողե՛ր ջան։

Հուրք ա թափում՝ վերիցը,
Ես վառայ քո սէրիցը.
Վարդավառին ինձ համար
Զուն բեր դու սարերիցը։

Սարի գլխին ձուն եկաւ,
Շողե՛ր ջան.
Շէկլիկ եարբս տուն եկաւ,
Շողե՛ր ջան.
Ուն կերեւայ, ձուն կերեւայ,
Շողե՛ր ջան,
Բերդի տակին տուն կերեւայ,
Շողե՛ր ջան.
Դեռ մուրազիս չը հասած,
Շողե՛ր ջան.
Վերէս խորունկ քուն եկաւ։
Շողե՛ր ջան.

Ուց կիրեւայ, ձուց կիրեւայ,
Ցոպե՛ր ջան,
Բերդի տակին տուց կիրեւայ,
Ցոպե՛ր ջան:

Աշունն եկաւ տարիցը,
Տերն թափեց ծառիցը.
Ցաղն գարդով լցուել ա,—
Հեռացել ա եարիցը:

40.

Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր:

Վարդավառը գալիս ա,
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,
Ծաղիկը ցընծալիս ա.
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր.
Ա՛յ գիւղումը կանչող աղջիկ,
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,
Զէնքդ ծլվլալիս ա.
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր:

Կանաչ տեղը՝ բաղում եմ,
Պարի միջին խաղում եմ.
Կաքաւի պէս սրտալի,
Ծլզանելին գաղում եմ։

Կարմիր գինին թասումը,
Ես եմ քո հաւատումը.
Ե՞րբ կը տաքնան աղջիկները,—
Վարդավառի պատումը։

—Հա՛յ, ասի նա, ասի նա,
Կարմիր գինին թասին ա.
Ծլզէք երբ կը կատրուին,—
Հարթաթոզի պատին ա։

—Սիրուն աղջիկ, նազ ունիս,
Շահ զաղայի սազ ունիս.
Հոգեմ շահ զաղի գլխուս,
Դու իմ հոգում հազ ունիս։

41.

Տղայ. Հա՛ր բրբա՛ն։
Աղջիկ. Չա՛նկ չա՛ն։

Տղայ. Սիրել եմ՝ սերն երեսին,
Անթառամ թերն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չի ասայ,
Ասաքծու կերն երեսին։

Աղջիկ. Հարբրբա՛ն։
Տղայ. Չանկ չա՛ն։

Աղջիկ. Սարի թըրթընջուկ թաղա,
Մեղր ու շաքար քեզ ծաղա.
Ինձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս տըղին ոնց սազայ։

Տղայ. Պըզտիկ աղջիկ, համ ունիս,
Զարեքդիմաց ծամ ունիս.
Խունջիկ-մունջիկ մի անի,
Ինձ տանելու կամ ունիս։

Աղջիկ. Դուխանները հոլան, հոլան,
Դուխանների տակը փոլ ա.
Քանի գրժուխիւն անես,
Քեզի առնողը տոլ ա։

Տղայ. Ձեր տան տակին փար կանեմ,
Ձար ապրուստին դար կանեմ.
Թող իմ սիրածն ինձի տան,
Գրժուխիւնքս թարկ անեմ։

Աղջիկ. Ջուրը իր ճամբով կերթայ,
Ցողածը փարդի թերթ ա.
Ինձ սիրող կըտրիճ տըղէն
Հազարի մէջ մի բերդ ա։

Տղայ. Բուսել ես բաղի միջին,
Ճամամի թաղի միջին.
Դիշեր ցերեկ միտքս ես,
Դու ես իմ խաղի միջին։

Աղջիկ. Աշուղի պէս խոսղ ասա,
Բլբուլի պէս ոսղ ասա.
Ինչքան որ գովես՝ արժեմ,
Իմ մար գովական փեսայ։

42.

Նոր է բացուել բարի լուս,
Մէկ ուեղ կերթանք դար ի դուռ։
Բոբիկ մի՛ քեզ, փուռ է,
Սի՛ռուցիկ, պագդ ացուռ է։

Էս ձորն ի վեր ձրնեբակ,
Դու նրանցիս արեգակ։

Հով կը փչէ սարն ի վեր,
Արտուտ կելնէ դարն ի վեր։

Ա՛ղջիկ, ուռուշիկ նազեր,
Խելքըս տարաւ քու մազեր։

Երկնից կամար ունքերդդ,
Ինձի վառեց քու աչերդդ։

Մատաղ լինեմ սև աչին,
Ես կարօտ եմ քու պաչին։

43.

Հոյլս, ախ, արեամբ ոռնե.
Բանի, մի ում մեր գրանե
Տարաբեմ, իմ ազգակից գրկանոց.—
Դու քնեմ մէջ քնաց ես քրտնե-
Տի գամ, զարգնեմ կարմիր երես.

Հոյլս, ախ, արեամբ ոռնե.
Բանի, մի ում մեր գրանե
Ասար զարմանց մ՝ եմ ոնան,
Երկու շանամ՝ էր ի նեն,
Սև ձեռ էր փամբրմեն բարար.

Հոյլս, ախ, արեամբ ոռնե.
Բանի, մի ում մեր գրանե
Սիրաս ի վրանան, ուշերս ի քաց.
Ասար նրանեմ, էնրանե՝ ախ բամ,
Բարէ կարկաս ուշերէս գար.

Հոգյա՛ն ոգի՛, արնաներկ տուն.
Գնալիս մի՛ տա մեր գլուխն
Իմ խոցերն է շատ.
Վատաց ծով գրկեն գեղ բլեր,
Քիմ գան վերքեր չի գեղի։

44.

—Աղբանոնկ, յոնատ կուգան
—Բազդատաց չոկեն
—Խարիկ մը չանեն
Իմ հոլեն, մոլեն

—Քու հեր է մեռել,
Քու մեր շրատիս.
Սոխ ուր ձեթիկիկ
Զագեր, ձլատիս

45.

Ցոմուն հաւք ըմ կէր,
Անուն էր արօր,
Վըզիկ երկէն էր,
Արբոսիկ անաւոր.
Կապեմ բեշարէս,
Երթամ հետ ինոր,
Էն իմ գարդ գիտի,
Ես էլ գ՝ինոր։

Եկաւ հաւք ըմ էլ,
Թըզթիկ կէր բերան,
Առի, կարդացի
Իմ գըլխու ֆերմանն.
«Արի, նա՛ր, արի,
Խրատով մի կենա,
Ամարաւորի մալ
՚Զի, քե չի մընա»։

46.

Աղուէս գընաց, մրուռ ջաղաց,
Թաթեր վերուց մի բոլ խաղաց։

Հարա՛յ, ա՛ղուէս, պարո՛ն ապուէս,
Ուխտարեմի մէջ չը կայ քու պէս։

Մի կատ ու կէս կարեկ ապաց,
Էն էլ շալակն առաւ, գընաց։

Աղուէս կերաւ գեղի հաւեր,
Փարուէզ տըւաւ վերի կալեր։

Աղուէս պառկեր բըրչոտ կողին,
Թաթեր դըրեր սիպտակ հողին։

Ասի՝ բրռնենք կուզ ու ապուէս,
Աշունք կարդեմ իմ Օհանէս։

Էլ գին չարաւ յէլ տարուայ պէս,—
Ապառ մընաց իմ Օհանէս։

47.

Գնացէք, տեսէք՝ ով է կերել այգին։—
Գնացին, տեսան՝ այծն է կերել այգին։
Այծն ու այգին,—
Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ։

Գնացէք, տեսէք՝ ով է կերել այծը։—
Գնացին, տեսան՝ գայլն է կերել այծը։
Գայլն ու այծը,
Այծն ու այգին,—
Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ։

Գնացէք, տեսէք՝ ով է կերել գայլը։—
Գնացին, տեսան՝ սուրն է կերել գայլը։
Սուրն ու գայլը,
Գայլն ու այծը,
Այծն ու այգին,—
Ձեզ բարիկենդան, մեզ բարի զատիկ։

Գնացէք, տեսէք՝ ով է կերել սուրը։—
Գնացին, տեսան՝ ժանգն է կերել սուրը։
Ժանգն ու սուրը,
Սուրն ու գայլը, եւ այլն։

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել ժանգը։—
Գնացին, տեսան՝ իւղն է կերել ժանգը։

Իւղն ու ժանգը,
ժանգն ու սուրը, եւ այլն։

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել իւղը։—
Գնացին, տեսան՝ մուկն է կերել իւղը։

Մուկն ու իւղը,
Իւղն ու ժանգը, եւ այլն։

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել մուկը։—
Գնացին, տեսան՝ կատուն է կերել մուկը։

Կատուն ու մուկը,
Մուկն ու իւղը, եւ այլն։

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է տարել կատուն։—
Գնացին, տեսան՝ հարսն է տարել կատուն։

Հարսն ու կատուն,
Կատուն ու մուկը, եւ այլն։

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է տարել հարսը։—
Գնացին, տեսան՝ փեսան է տարել հարսը։

Փեսան ու հարսը,
Հարսն ու կատուն, եւ այլն։

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է տարել փեսան։—
Գնացին, տեսան՝ Աստուած է տարել փեսան։

Աստուած ու փեսաց,
Փեսաց ու հարսի,
Հարսց ու կաստուց,
Կաստուց ու մուկը,
Մուկց ու իւղը,
Իւղց ու ժանգը,
Ժանգց ու սուրը,
Սուրց ու գայլը,
Գայլց ու այծը,
Այծց ու այգին,—
Չեզ բարիկենդա՞ն, մեզ բարի զատիկ։

48.

Էս Սվենկն եմ Զամբրլեցի, մէկ Ջիւան,
Խա՛ճում Եւա ջան.
Բլանին տարան էսուց չուրի Երևան.
Դուն կեցի՛ր բարով,
Ես կերթամ լալով.
Լալով, ողբալով,
Քոչ ու բարխանով,
Սարեր մանն գալով.
Լալով, ողբալով,
Քոչ ու բարխանով.
Սարեր մանն գալով։

Ձեռ ու տոքս կապին քերդը դըրեցին,
Ձուխայ, շալուար լալով տունը քերեցին։
Օրե՛ր, գարնան ամո՛ւս օրեր,
Ա՛խ, ո՞ւր էք կորեր.
Օրե՛ր, գարնան ամո՛ւս օրեր,
Ա՛խ, ո՞ւր էք կորեր։

Բերդիցը դուրս ելայ, Ալագեազ տեսայ,
Արարատ աշխարհքը դըրախտի պէս ա.
Ապարան աչքերիս դուման ա գառել,—
Իմ կեանքն ու ամբը եման ա դառել։

Ոչխարն էգդին կարծայ՝ էնդ ին գառներ,
Կանաչել են ծաղիկներ, ծառներ.
Արի, երթանք որ ման գարուն արտեր,
Գնդի տեսայ, նորացան իմ՝ գարդերը։

49.

Շորորա՛, Սա՛թաբ, շորորա՛,
Նաւակն Արշակին կորորայ։

Արշակն եկաւ, ծովը գընաց,
Խեղճ Սաթաթին ցաւեր մընաց.
Խաբար տարէք խեղճ Թամամին,
Աբրէի տուն տեր մընաց։
Շորորա՛, Սա՛թաբ, շորորա՛,
Նաւակն Արշակին կորորայ։

Թամին եկաւ երան երան,
Նաւը գտիկաւ ծովի բերան.
Խաբար տարէք իմ՝ մայրիկին,
Մեր տուն ու տեղ մընաց վերան։

Վերն նայեմ,—կապուտ ամպ ա,
Ներքև նայեմ,—ջուր ու շատր ա.
Վերն Աստուած ազատեցի,
Ներքև չեղաւ ինձի ճարայ։

Երկինք ամպեց, քամին առաւ,
Ծովի երես ջուրը սառաւ.
Թիակ զարկի, ինչ որ արի,
Նաւը տեղէն եւ չը գառաւ։

Էս Արշակն եմ Գուլաբեցի,
Դիշեր, ցերեկ ծովին կացի.
Թարար տարէք իմ Սալաթին,
Հընար չեղաւ, նրատայ լացի։

Ասածուց եկաւ, էս ինչ բան ա,
Էս էս ցաւ ին չեմ գիտանայ.
Թարար տարէք իմ Նիկոլին,
Էս նեղ տեղից ինձի հանայ։

Բաք ու գառան ա ձորերը,
Սև ա գառել իմ օրերը.
Ախաղա ինձ պէս կըտրիճ տըղէն,
Բազչին մընաց իմ շորերը։

50.

Օրն էր ուրբաթ,
Լուս ի շաբաթ,
Գեաշտ էրիր ենք Մալաքեաւէն.
Թըղթիկ մ՝ եկաւ Զըզիրու քաղքէն,
Առին, քերին Մալաքեաւէն,
Տուին ի ձեռ Մոկաց Միրզէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզեն։

Առեց, կարդաց քաղցրիկ լեզուէն,
Էրաւ մաղդէն,
Շըլեց աչքեր, կախեց չանէն,
Քաղուաւ գոյն կարմիր երեսէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզեն։

Կանչեց, ասաց իւր մըշակին,—
Գնաս քաշի Բոզ-Բեգաւին,
Վըրայ գըրէք թամքը սաղաֆին,
Սաֆար կերթամ՝ չուր Զըզիրէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզեն։

Գնաց, հասաւ չուր Զամբարէն,
Խաթունները թափան փանջարէն.
Թափան Մոկաց Միրզի թամաշէն.
Զըկէր իւր նըման բոլոր գունիէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն։

Գընաց, հասաւ չուր Զըգիրէն.
Եկան, ժողվան քաղաք գըմէն.
Մոկաց Միրզէն՝
Կարժէր քաղաք գըմէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն։

Թէր չը տեսնէր Կոլոտ Փաշէն.
Բաժն էր կոլոտ, ըրրշամ երկէն.
Կանչեց Մոկաց Միրզէն,
Տարաւ իւր օդէն։
Բեմուրադ կեցեր Կոլոտ Փաշէն։

Առեց փարէն, իշաւ շուկէն,
Եռու, առեց մէկ քաշըլէն,
Առեց,բերաւ,գանակ գեղեց մէկ երեսէն,
Կաժեց՝ կաժ մ՚ինք կերաւ,
Մէկ եռաւ՝ Մոկաց Միրզէն։
Բեմուրադ կեցեր Կոլոտ Փաշէն։

Հեծաւ գնին Մոկաց Միրզէն,
Քամեց մազգէն,
Ճրոյնաւ բաբակ աչքեր, կախաւ լամէն,
Թափաւ մրրուսէն,
Թափաւ մազեր կարմիր երեսէն,
Թափաւ բեզեր նազիկ պըռկէն,
Թափաւ դեզին ջուր սիպտակ լեշէն։
Բեմուրադ կեցեր Կոյոս Փաշեն։

Եկանք, հասանք չուր Խընկու դարէն.—
Բարով հասանք չուր Խընկու դարէն։—
Տեսանք ժուռ ժուռ նաշըներ քուց բերեն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզեն,
Բեմուրադ կեցեր Կոյոս Փաշեն։

Եկանք, հասանք չուր Բրոնաշէն.—
Բարով հասանք չուր Բրոնաշէն։—
Կուժն ու կըթխէն կապած նաշէն՝
Պուռ պուռ արիւն թափէր գետին։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզեն,
Բեմուրադ կեցեր Կոյոս Փաշեն։

Խաբար տարէք Մալաքեաւէն.
Թող խաղայ հանապէն,
Թող խաղայ ջանապէն.
Հազա՜ր ափսոս Մոկաց Միրզէն,
Բեմուրադ կենէր Կոլոս Փաշէն:

Խաբար տարէք Մալաքեաւէն,
Խաբար տուէք Բերդի խաթունին.
Թող գայ վար իւր թախթէն.
Հանէ թաղէն, հագնէ զէրին,
Ինչի բերդի խաթուն է էն.
Հազա՜ր ափսոս Մոկաց Միրզէն,
Բեմուրադ կենէր Կոլոս Փաշէն:

Եկանք, հասանք Մալաքեաւէն.
Եկանք, մըտանք Միջաթաղ.
Մէկ հանապէն, մէկ ջանապէն,
Երկուս կը խաղան էն մէկ խաղ.
Խաբար տարէք ճերկան, մերկան,
Թանգ Նազլուխան թող տան երկան:

Եկան, ժողման Մոկացիք,
Եկան մտա Մոկաց Միրզէն.
Տարան գերին մէջ պողերուն,
Դուռն էլ բացին հարաւ քամուն.

Կացէ՛ք բարով,
Հարա՛ւ տարով,
Թանգ Նազուխանց
Թող տա՛ն Էրկանց.

Ծանօթութիւն

Հազար ու մի խաղի այս առաջին յիսնեակը կազմուած է ամբողջապէս ժողովրդական երգերից, որոնք բոլորն ունին իրենց յատուկ եղանակները և որոշուած են երգելու և ոչ թէ կարդալու համար։ Տեղի խմաստի կապակցութեան թերին լրացնում են եղանակն ու կրկնակները։

Ձեռի տակ ունեցած լինելով մօտ 25 հազար քառատողերի ժողովածու, ինչպէս և ուրիշ երգերի վարիանտները, բաղդատել ենք նոյն երգերի վարիանտները և վերցրել մեր կարծիքով ընտիրը համարուած ձևերը։ Եթէ թուրքերէն բառերի տեղ հայերէնը դնել ենք, հայերէնն ենք պահած. բայց և այնպէս դեռ յաճախ մնում են թուրքերէն բառեր, մանաւանդ յանգերի մէջ։

Համար 2, 4, 5, 43, 44, 45, 46, 47 և 50 երգերը ժողովրդի մէջ արդէն ամբողջ են. դրանցից համար 5, 46 և 47, որքան գիտենք, առաջին անգամ այստեղ են հրատարակուում։

Համար 33, 37, 38, 48 և 49 երգերը խաղաթղթի մէջ անկապ անելու է, խառն ի խառն երգում են այս կամ այն անձի, կամ գանազան համանման գէպքերի և այլն մասին։ Այսպիսի բազմաթիւ անելից առել ենք միայն ընտիրները և աշխատել ենք այնպէս դասաւորել, որ որոշ իմաստ արտայայտուի։

Մնացած 36 երգը մեր խմբագրութեամբ են կազմուած։ Յաղթութիւնը սովորաբար միառն միայն երգում է որ և է եղանակով և ապա իրեն ծանօթ քառատողերից, առանց մարին ուշադրութիւն դարձնելու, շարունակութեան մէջ երգում է անխտիր այս կամ այն քառատողը։ Մենք աշխատել ենք յաջորդ անելի ընտրութիւնն այնպէս անել, որ բոլորը միասին որքան կարելի է մի ամբողջութիւն կազմեն և յարմար լինին եղանակին և կրկնակների իմաստին։

Այս երգարանի գործածութեան ժամանակ պէտք է ի նկատի ունենալ.

1) Կրկնակները ապուած են շղթառներով և միայն առաջին անելի մէջ յաջորդ անելի մէջ պէտք է համապատասխան տողերից յետոյ երգուին նոյն կրկնակները։

2) Բացի մի քանի բառերից, ինչպէս

ԼՆ՝ ԵՍ (գեղամանն։ ԵԿ ԵՍ ՅՊՆ, բառասկզբի Ե տառը. բան ժողովրդական ոչ տառանութեան, այլապէս է Ե հնչել։ Նոյնպէս և բառասկզբի ՍՍ տառը սովորաբար արտասանւում է իբրև ՀՆՉԱՊԷՍ ՍՊՈՐՄԻ=ՀՊՈՐՄԻ։

Ս. Էջմիածին. Ե. Վ. ԵՒ Ա. Ա.

ՑԱՆԿ

		էջ.
1	Ալագեազ սարն ամպել ա (11) .	15
2	Ախ կանեմ, արուն կու գայ (19).	22
3	Ախ, մարալ ջան, կոկոնը թոռմած մընաց (25) . . .	30
4	Աղուէս գընաց, մրտաւ ջաղաց (46)	55
5	Ամպել ա, ձուն չի գալի, Եողեր ջան. (39)	45
6	Անձրևն եկաւ չաղալէն (13) .	17
7	Առնեմ, երթամ էն սարը (30) .	35
8	Արազը հեշտացել ա (7) . .	11
9	Երև թըռվրռով եկաւ (15) .	19
10	Գարուն ա, ձուն ա արել (32) .	38
11	Գացի արտեր, ըրոնի լոր (37) .	43
12	Գնացէք, տեսէք՝ ով է կերել այգին (47)	56
13	Գոբիտանը հաց եմ քերում (6) .	10
14	Եար. այ, հեւա, հեւա, սիրտըս,(26)	31
15	Ես Աղեկն եմ Զամբրլեցի մէկ ջուան (48)	58
16	Ես սարէն կու գայի (33) . .	38
17	Երկինքն ամպել է (10) . .	13
18	Էս գիշեր լուսը անայ (21) .	24
19	Էս գիշեր, լուսնակ գիշեր (28) .	33

		էջ.
20	Էս օր ուրբաթ է, պաս է (3) .	7
21	Լուանակը սարի տակին (22) .	25
22	Լուանակն ա կայնել դարին (24) .	28
23	Լուանակն անուշ, հոմն անուշ (4)	8
24	Մոման հաքըմ կէր, անուանն էր արօր (45)	54
25	Կայնել ես, կանչում էլ չես. (16) .	20
26	Կայնել ես վարդի հոմին (29) .	34
27	Կա դուռ քուռակ հնծել եմ (35) .	41
28	Կրոնձնիկ, յա՞ ա կու դաս (44) .	53
29	Կուժն ասայ, երայ սարը (9) .	13
30	Հարբրրան, ջանէ ջան, (11) .	49
31	Հաւար Զանրօ. մադամի Զանրօ, (38)	44
32	Հոմ արէր, սարի՛ ջան հոմ ալ էր (1)	5
33	Հօ. հանման ու հար ջան (34) .	40
34	Հօյ հար ապիզ հար ջան, դուռը բաց (27)	32
35	Հօյրս. ամս, ունաւեր տուն (43) .	52
36	Հօյ, Նազան իմ. Նազան իմ (31) .	36
37	Զիզ ասու, քաշի. այ հոգը (5) .	9
38	Մատնիրը մատամը չէր (18) .	22
39	Մեր դրատ՝ը խրնկի ծառ (12) .	16
40	Մոկաց Միրզա (50) . .	62
41	Նար է բացուել բարի լուս (42) .	51
42	Շորորա. Սալամի, շորորա (49) .	60
43	Զինար հս, կեռանալ մի (8) .	12